



ՄԱՐԹԱՐԵՐԹ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Ի. Բ. Ա. Ղ. Ա. Բ. Ա. Կ. Ա. Ն.

36^{րդ} ՏԱՐԻ

ՄԱՐԹԱՐԵՐԹ 28 ՄԱՐՏ 1887

ԹԻԻ 3866

ՄԱՐԹԱՐԵՐԹ կը նրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դրշ. եւ օտար երկրաց համար 15 Ֆրանք: Բաժանորդագրները ղրկելու է առ մատակարարութիւն Սրբէլքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Table with 2 columns: Name (Ա. Ա., Հ. Մ. Զ. Գ. Ա. Ն., ՈՐՍԿԱՆ, Պ. Տ., Պ. Ա. Տ. ՈՒ Ջ. ՈՒ Բ. Օ. Վ.) and Address/Details (Ազգային, Օրուան կեանքը, Բալանթարեան եւ Դրասէր, Ատոմ, Ջեռնաճուղական խաղեր, Ղարաբաղի աստղագէտը, Բաղադական, Օրագիր)

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 27 ՄԱՐՏ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ներկայ տարւոյս Յունուարի սկիզբէն համաձայնութեամբ Արեւելի Վարչութեան ընկերակիցներու՝ ստանձնեցի Մարտի շաբաթաթերթի հրատարակութեան հոգին, ինչ վերապահելով խմբագրութեան մասին պատասխանատուութեան մեծ բաժին մը:

Երեք ամիս է որ զանազան կողմերէ հարցումներ կ'ուղղուին խմբագրութեան, թերթին ընդհանուր ուղղութեան վերաբերմամբ: Ամէն մէկ հարցման առանձինն պատասխանել անհնարին լինելով, մի քանի բառով կը բացատրենք մեր համոզումները թերթի մը խմբագրին պարտականութեանց մասին:

Խմբագրի մը պարտականութիւններն ըստ բաւականին կը տարբերին պարզ յօդուածագրի մը պարտականութիւններէ: Երկուքն ալ թէպէտեւ պարտական են կատարելապէս բարեխիղճ լինիլ, բայց եւ այնպէս խմբագրապետ մը չէ կարող այնքան ազատ

լինիլ որքան պարզ յօդուածագիր մը: Յօդուածագիր մը երբ թերթի մը մէջ կը յայտնէ իւր կարծիքներն ալ եւ ալ խնդրոց վրայ, եւ զանազան անձանց նկատմամբ իւր դատողութիւններն ի հրապարակ կը հանէ, կրնայ ենթադրել թէ ուրիշ հրապարակագրի մը կողմնէն եւս տարբեր կարծիքներ, տարբեր դատողութիւններ կրնան հրատարակուիլ նոյն թերթին մէջ: Բայց երբ հրապարակագիրը կ'ստանձնէ խմբագրապետի պաշտօն եւ ինք միայն կրնայ ընդունիլ կամ մերժել յօդուածներ եւ փոփոխութիւններ ներմուծել տալ ի նոսա, այդ պարագային՝ խմբագիրը պէտք է մոռնայ յօդուածագրի մը դերը. դատաւոր մ'է նա որոյ համար ո'չ բարեկամներն, ո'չ թշնամիները դուրս թուին ունին: Իրեն ներկայացած ամէն յօդուածի մէջ պէտք է պահանջէ նախ յօդուածագրին անկեղծութիւնը, բարեխիղճութիւնն եւ հմուտութիւնը: Խմբագրին ինք պիտի դատէ թէ յօդուած մը խկապէս կը պարունակէ՞ այդ երեք յատկութիւնները: Խմբագիրը կրնայ սխալիլ իւր դատողութեանց մէջ, սակայն պարտաւոր է ամենէն նշանակալից անհաշիւ լինիլ, եւ քիչ սխալելու կենսական պայմանն է ազատ լինիլ ամէն անձնական նկատումներէ, վեր լինիլ ամէն կրքերէ:

Մի քանի օրինակներ աւելի լաւ կերպով կրնան պարզել մեր մտքը:

Ազգ. Ժողովոյ ատենապետ Մէրեթմ-Գուլի Էֆէնտին մեր բազմաժամանակեայ բարեկամն է եւ բնաւ անձնապէս ո'չ մի դժգոհութեան փոքր առիթ ընծայած է մեզ, սակայն վերջին դէպքերու մէջ Մէրեթմ-Գուլի Էֆէնտի իբր Ազգ. Ժողովոյ ատենապետ՝ միշտ իւր պարտականութեանց բարձրութեան համեմատ չչարժեցաւ. այդ մեր համոզումն է. դուցէ սխալինք, բայց մեր համոզումն է. հետեւաբար, կարող չէինք իբր խմբագիր դուրստել Մէրեթմ-Գուլի Էֆէնտին կամ լուր ըսելով որ «հին բարեկամ է Էֆէնտի չկարենք»:

Պէրպէրեան Ռէթէոս Էֆ. ի հետ մեր յարաբերութիւնները կարծեաց հակառակութեան սահմանէն շատ անդին անցած են, բայց եւ այնպէս երբ Պէրպէրեան Էֆ. իբր ազգային երեսփոխան՝ պաշտպանեց դատ մը որ մեր համոզմամբ արդար էր, չէինք կրնար պախարակել զնա կամ լուր ըսելով թէ «հին թշնամի է, ինչու զինքը դուրսը»:

Վաղը, նոյն Էֆէնտին, ուրիշ խնդրոյ մը մէջ այնպիսի դերք մը բռնէ դուցէ զոր դուրատանաց արժանի չհամարինք: այն ատեն ալ կը պարտաւենք:

Մարտի աշխատակից Մելանիա կը գրէր Մամուրեան Էֆէնտիի համար թէ՛ աշխատութեան տիպար մ'է, արդիւնաւոր ուսուցիչ մ'է, ինչպէս նաեւ կրնայ գրել թէ տաղանդաւոր գրագէտ մ'է: Ճշմարտութիւններ են որոց հրատարակութիւնը կը թոյլատրենք, առանց նկատողութեան առնելու թէ Մամուրեան Էֆէնտի միշտ թշնամաբար վարուած է մեզ նկատմամբ: Բայց երբ նոյն Մելանիան ուղէ գրել թէ՛ Մամուրեան Էֆէնտի ազնուահոգի եւ բարեկիրթ հրապարակագիր մ'է, անշուշտ այդ տողը պիտի ջնջենք:

Ինչպէս որ կը վարուինք անհատներու նկատմամբ, նոյնն է եւ մեր ուղղութիւնն ընդհանուր խնդրոց մէջ: Երեք ամիսոց մէջ ցոյց տուինք թէ ո' եւ է նախապաշարման ենթակայ չենք, ո' եւ է կուսակցութեան թշնամի կամ բարեկամ չենք:

Խմբագիր մը որ կը շարժի իւր անձնական նկատմանց տեսակէտներով, եւ կը զոհէ ճշմարտութիւնը, — դէթ ինչ որ ինք համոզուած է թէ ճշմարտութիւն է — անձնական բարեկամութեան կամ թշնամութեան նկատմանց, այդպիսի խմբագիր մը բնաւ չտարբերիր այն խմբագիրներէն ոյք իրենց դրէն ի վաճառ կը հանեն:

Ա. Ա.

Հրատարակեցաւ Վիեննայի Միութարեան Հարց ԱՄՍՕՐԵԱՅ ՀԱՆԴԻՍԻ ապրիլի ամսաթիւն, հետեւեալ բովանդակութեամբ.

Այլապլ Վիճակը կամ դատակարգը մարդկային ընկերութեան. — Պերսեպոլսոյ սեպագիրք. — Բաթթէօսի շնոստի դարմանը. — Հայերէն ձեռագիրք ի Գրաքու. — Պատմութիւն հայ լրագրութեան. — Լեզուաբանական առածք. — Գաւառիկա (պատմական նորավէպ) — Նորալուրք. — Տնտեսական. — Մանրալուրք:

ՕՍՄ. ԿՅՅՍ. ՊԱՆԲԱ

Օսմանեան Կայս. Պանքայի Ղալաթիոյ եւ Պոլսոյ գրասենեակները դոց պիտի մնան յառաջիկայ երկուշաբթի 11 ապրիլ (ն. Տ.):

ՕՐՈՒՍԱՆ ԿԵԱՆՔԸ

ՕՐԹԱՊԵԴԻԿԱ, 24 մարտ

«Արշալոյս»-ի խմբագիրը. — Վարդգյւրներու խնդիր եւ Ներսէս Կաթողիկոս. — Նախախնամական Գիււսն. — Այլադատան ուսուցիչներ. — Անհման կեղծաւոր մը. — Բողոքական Հայք եւ Սամաթիոյ Գաւառիչը. — Քարոզ եւ Հայք. — Մատթէոս Կաթողիկոս. — Օրթոդոքսիւ ժողովը. — Յիմարանոցի եւ «Ճաշակ Ոսկեղէն»-ի շուրջը:

Երիտասարդ սրտեր, ոյք դեռ նոր կը ծին կը ծաղկին, կը սիրեն մեղամաղծիկ յոգեւածներ եւ կը մեղադրեն զիս որ բաւական ատեն է չեմ հրատարակած սրտաշարժ բան մը: Սակայն թող ներդաշնակիւնին շինծու միջոցներով տխուր լինելու կարող չենք. տխրելու համար առիթ ունիւմք է. օրինակի համար, անցեալ տարի պոզարեր տարի մ'էր, մահուան տեսակէտով. խոյս տարի ամուլ է բարեբաղդաբար կամ դժբաղդաբար, ինչպէս որ կ'ուզէք:

Այս տարի քիչ թէ շատ բերնի համով մահ մը եթէ կայ, այդ ալ Յարութիւն Սըվաճեանի, Աբշալայի վերջին խմբագրին մահն է: Այդ մասին ալ մեր իզմիրի թղթաւորները բաւական գրեց — եւ քիչ մ'ալ բաւական է աւելի: Մենք շատ տեղեկութիւն չունինք այդ խեղճին վրայ, միայն թէ աւանդութիւն մ'է — եւ աւանդութեան մը չափ արժէք ունենայ — որ նա դաւադրութեան մը զոյճ եղած է: Պատմութիւնն ամէն ոք գիտէ, եւ ոչ ոք կը դարմանայ, վասն զի ամէնքս ալ զիրար կը ճանչնանք, բայց փոքրիկ պարագայ մը կայ անձանթ շատերուն: Սըվաճեան ստացած է այն նամակը զոր Աբշալայի խմբագրատունը ձգած են եւ զայն սրբադրելու կ'ընդունէր մինչ տեսողը բռնած է. տեսեալ հարձեռնէն զրոյն կ'իյնայ եւ խմբագիրը կը փութի անկողնոյն մէջ: Այդ միջոցին տալարանէն ձեռագիր կ'ուզեն — եւ տալարանէն երբ ձեռագիր ուզեն ածապարանօք, միշտ ձախարդութիւն մը կը պատահի: Մահ մը ներս կը մտնէ, ձեռագիրը կը գտնէ գետինը, սրբադրուած կը կարծէ, կուտայ գրաւորին, կը տանին տալարան, կը շարեն, կը հրատարակեն, յետոյ ձեռագրաւորութիւն, բանտ, դատ, մահ:

Բայց մենք, ինչպէս սովորութիւն է ըսել, վարագոյր մը ձգենք այդ տխուր դէպքերուն վրայ ոյք զուցէ աւելի վէպի մը նիւթ մատակարարեն Հայոց բարբերու մասին, քան քրոնիկի:

Եթէ այստեղ փակենք վարագոյրն, անգին ուրիշ փակ վարագոյրներ կը հրաւիրեն մեր ուշադրութիւնն: Վերջին շաբաթներս վարագոյրի խնդիրը բաւական գրաւեց Հայոց ուշադրութիւնը: Խրիմօ-Մանկունի խնդիր մը ծագեցաւ: Մեծ պահքին կարելի՞ է վարագոյրը բանալ եւ բահանայ ձեռնադրել: Մանկունի եպիսկոպոս «Նշ» պատասխանեց եւ մերժեց իրեն եղած հրաւերը: Խրիմեան Հայրիկ ապո'՞ք ըսաւ եւ փառաւորապէս կատարեց ձեռնադրութիւնն: Ո՞ր իրաւունք ունի: Մին գրեթէ Կաթողիկոս, միւսն երբեմն փոխ-Կաթողիկոս եւ կրթութեամբ յոյս Կաթողիկոսի: Մանկունի եպիսկոպոս մտացի գտնուեցաւ: Ի՞նչ հարկ խնայ Խրիմեան Սրբազանի հետ: Խնդիրը Կաթողիկոսին գնացէր հարցուցէր, պատասխանէր:

Ի՞նչ պիտի ըսէ Կաթողիկոսը: Չենք գիտեր, բայց Ներսէս Առաքաւորներէն ձեռնադրեալն եթէ անկէ՝ «մագ մը ունի», կար-

ծեմ իրաւունքը Մանկունի եպիսկոպոսին կուտայ: Թէ ինչո՞ւ:

Ներսէս Առաքաւորներ Կաթողիկոս էր երբ կը մեռնէ: Նիկիոյ Կայսրն որուն կը յաջորդէ Աղեքսանդր Բ.: Ամրող Ռուսիա յուզեալ է, եկեղեցիներն հանգուցեալ Կայսրն հոգւոյ հանգստեան աղօթքներ կ'ընեն, պատարագներ կը մատուցանեն: Թիֆլիզի փոխարքայն լուր կը զրկէ յիշմամբն Կաթողիկոսին որ Հայոց բոլոր եկեղեցիներու մէջ հանգիստաւոր պատարագ մատուցուի, վարագոյրները բացուած: Կաթողիկոսը պատասխան կը զրկէ. «Մեր եկեղեցական օրէնքներն որոշած են այն օրերն յորում Մեծ պահքի մէջ կարելի է վարագոյրները բանալ այդ օրերէն դուրս վարագոյր բանալ մեր օրինաց հակառակ է: Եթէ մեռնին աշխարհիս բոլոր կայսրքը, բնաւ չենք կարող բանալ վարագոյրն մը ծայրն անգամ: Եւ Ներսէս Կաթողիկոս կ'ընէ ինչ որ կ'ըսէ:

Գիտնալով այս դէպքը Մանկունի եպիսկոպոս, կ'ըսէ թէ խնդրոյն լուծումն էլ միայնակն հարցուցէք: Բայց ի՞նչ հարկ: Ո՞չ ապաքէն՝ քան զՍողոմոն իմաստունն է աստ»:

Հունի՞ք հզօր մարմին մը աւելի ձեռնհաս քան Կաթողիկոս եւ Սինօք. այդ է Ատենապետաց Գիւանն, որ Հայոց համար ըստանձնած է հանրային փրկութեան Յանձնաժողովը մը դերն եւ իւր հայրախնամ հոգածութիւնը ցոյց կուտայ ամէն խնդրոյ մէջ:

Նախախնամական բարիք մ'է այդ Գիւանի գոյութիւնն, ամէն կնճռոտ խնդիր կը յանձնենք նորա իմաստութեան: Այսպէս է նաեւ Վարժապետաց եւ Ռուսիական Խորհրդոյ միջեւ ծագած անհամաձայնութիւնն, ինչպէս նաեւ «այլադատան հայ վարժապետաց» գործն:

Նամանաւանդ այս վերջին գործը կարգադրելու համար կարծես մասնաւորապէս ստեղծուած է Ատենապետաց Գիւանն: Գիւանադիտութիւն, ներքութիւն, պարզօրէն խօսելու անընդունակութիւն, ահա՛ Գիւանի յատկանիշներն որոցմով կրնայ մոլեռանդութիւնն ու զգարում լուսաւորեալ ոգւոյ պահանջներն՝ հաշտեցնել միմեանց հետ:

Միայն թէ այս յատկութիւններն յատուկ չեն այդ Գիւանին այլ ազգային յատկութիւններ են որոց ամփոփումն Ատենապետաց Գիւանն է:

Ի՞նչպէս կը ձամբեն վարժարաններէ այլադատան ուսուցիչ մը, օրինակ բողոքական հայ մը:

— Միւսիւ, դուք կը դատախօսէք շաբաթներ երեք անգամ՝ երկուական ժամ, այնպէս չէ՞, կը հարցնէ հոգաբարձութիւնն:

— Այո՛:

— Այսուհետեւ պէտք է որ շաբաթը վեց անգամ դատախօսէք երեքական ժամ:

— Շատ լաւ. ըստ այնմ կը կարգադրեմ գործերս:

— Իսկ ամսականնիդ, չորս օսկի կ'առնէք այնպէս չէ՞:

— Այո՛:

— Այսուհետեւ երկու օսկի պիտի առնէք:

— Ի՞նչպէս, ի՞նչպէս:

— Ամիսն երկու օսկի:

— Այսինքն շաբաթն երկու օսկի:

— Ո՛չ, ամիսը. — Չէ՞ք ընդունիր, չէ՞ք ընդունիր, կը ծաղրէք զմեզ, շաբաթն երկու օսկի հարցնելով: Ուրեմն այս վայրկեան հրաժարեալ էք:

Ահա՛ ինչ ոճով կարելի է հաշտեցնել

միմեանց հետ ազգային կրօնական ոգին եւ դարուն լուսաւորեալ գաղափարները:

Բայց պիտի ըսէք թէ մի քիչ կեղծաւորութիւն կը բուրդ գործելու այս եղանակն, այլ շատոնց գիտենք անպատակի եւ միջոցի խնդիրը եւ յետոյ այս պարագայիս մէջ լաւ կուտանի մը վրայ ենք: Գէթ բողոքական հայերն զմեզ մեղադրելու պատրուակ մը չունին: Կեղծաւորութիւնն այն պիտի տունկ մ'է որ աւելի բողոքականութեան ջեռանոցին մէջ անվճար կրնայ պահպանուիլ եւ թարմ մնալ: Այդ վճարը տըւած են կարգադրեալ եւ կեղծաւորութեան գլուխ գործողներ ցոյց կուտան անգլիացիներն: Մենք ալ գիտենք թէ պատուելիներն որ մեզ կուգան, իրենց մեզ պարգեւած գլխաւոր բարիքներէն մին է կեղծաւորութեան դարգացումն: Օրինակներ կը վստան, միայն մէկ հատը պատմենք:

Թուրքօ-ռուսական պատերազմի ատենը բարեկամներէս մի հայ երիտասարդ Պարսկաստանէն Ռուսիոյ սահմանագլուխն անցնելու հարկին մէջ կը գտնուի: Բաղադրական դէպքերը զինքն առ այս կը հարկադրեն Քեյզէրէ առնուլ կարող չէ. թէպէտ շատ պատուաւոր է, բայց անհիմն կասկածներու պատճառաւ փախստական կ'երթայ: Յովհաննէս անուամբ Պատուելիի մը հետ միասին են. կը մօտենան սահմանագլուխն, երբ զինուորական իշխանութիւնն ասոնց անցագրերը տեսնել կ'ուզէ: Պատուելին ամենայն հանդարտութեամբ իւր անցագիրը ցոյց կուտայ: Երիտասարդ փախստականը կ'ըսէ՝ պատուելիին որ յայտարարե՞ք է ինքնորա ծառան է, հետեւաբար անցագրի պէտք չմնար: Պատուելին իւր աչքերն արկինք վերցուցած, ձեռքերը բազկատարած կը պատասխանէ:

— Տէրը կը պատուիրէ սուտ չխօսիլ:

Այսպիսի կեղծաւորութիւն մը եւ ոչ իսկ ամերիկացի միսիոնար մը կարող էր մտածել: Բարդ բաղդաբար երիտասարդն յանդուգն էր եւ պարսիկ օտարականներն ալ անօթի, որով գործը կը դիւրանայ: Հակառակ պարագային մէջ «Տիրոջը» հաճոյ լինելու համար խեղճ անմեղ հայ երիտասարդը պէտք էր հրացանի բռնել առը:

Այս առաւօտ հայ բողոքական բարեկամի մը հետ կը խօսակցէինք այս նիւթին վրայ եւ ըսի իրեն կատակով մը — թէպէտ կատակն ամենէն լաւ ձեւն է լուրջ գաղափար մը յայտնելու:

— Ինչպէս կը տեսնէք, եղբայր, կրօնափոխութեամբ չբարեփոխուիր Հայոց բարոյականն եւ կարծեմ թէ բողոքական հայք բարոյականի մասին աւելի շահաւոր պիտի ելնեն դարձեալ մեզի գալով:

— Կ'ուզէ՞ք որ բողոքական Հայք իրենց մայրենի եկեղեցին վերադառնան, միակ միջոց մը կայ:

— ?

— Տաւը քան հատ բարոյիչներ ունեցէք Սամաթիոյ Ս. Գեորգ եկեղեցւոյ քարոզչին նման եւ ապահով եղիք որ բողոքական հայք կը վերադառնան առ ձեզ:

Եւ բարեկամս պատմեց թէ այս կիրակի ուրիշ բողոքական հայու մը հետ գնացեր են Սամաթիոյ Ս. Գեորգ եկեղեցին. ուր երկուցեան քարոզը կուտար Խթութեան Գեորգ վարդապետ: Չարմացած մնացեր են վարդապետն այնպէս գեղեցիկ, հեզ կերպով:

հոգեւորութեան տրամադրանքով խօսած է, որ երկուքն ալ — եւ երկուքն ալ ուսեալ բողոքականներ են — յայտարարած են թէ ընտելացաւ իրարմը մը լաւ չեն եւ ոչ մէկ պերճախօս բողոքական պատուելի է: Եւ իրենց գոհացումը գործնական կերպով յայտնելու համար փափաքած են ներկայանալ քարոզիչ վարդապետին եւ սեղմել նորա ձեռքն (համբուրելու տակաւին չգիտեն), բայց այդ կարելի չըլլալով պնակը բաւական ստակ ձգած են:

Արդարեւ մենք ալ ըսինք որ այդ վարդապետն արժանաւոր անձ մ'է. թէպէտ լաւ չենք ճանչնար, սակայն դէմքին վրայ չնորհք կայ — յատկութիւն մը որ պէտք էր սովորական լինէր ամէն վարդապետաց բայց հազուադէպ յատկութիւն մը եղած է: — Միայն թէ երկուքն ունին որ Պատրիարքական մէջ փոխանորդ Հայր Սուրբին այդ չնորհքն տարբարեւորական փորձերու չենթարկի:

Հայերը կրօնական ինչ տեսակ բաժանումներ ալ ունենան, մէկ կէտի վրայ միաբան են. քարոզն ամէնուս համար հրապուրիչ է: Թուի թէ մեր յատկութեանց մէջ տիրապետող յատկութիւնը խօսակցի է, ուստի խօսիլը, խօսողները շատ կը սիրենք եւ այնքան կը սիրենք որ շատ անգամ ժամանակ չունինք աշխատելու: Եւ երբ ճշտողը կ'ըսեմ, թէ մը ընդարձակ կերպով կ'հասկնամ. Ազգային ժողովոյ ատենաքանները, պարգեւաբաշխութեանց, ըսենք պերճախօսները, քարոզիչներ են, ոյք մրցում կ'ընեն վարդապետաց, առանց սակայն կարենալու զանոնք գահընկէց ընել:

Եթէ մէկն յանձնառու լինէր հաւաքել վերջին 50-60 տարիներու մէջ տրուած քարոզներու պատմութիւններն, պիտի կարենար մեր ազգային կեանքի զանազան երեւոյթներու եւ փոփոխմանց նկարագիրը գտնել անոնց մէջ:

Երբ Հայոց ազգը լաւ քարոզիչ մը գտնէ, այլ եւ չճանաչանար, ահա՛ բնաւորութեանց ամենէն տոկոսն է: Մի քառորդ դար է Նար-Պէյ խորէն եպիսկոպոս կը քարոզէ, եւ երկսեռ ժողովուրդը միշտ գունդագունդ կը դիմէ ուր որ ալ գտնուի նա. թէպէտեւ Սրբազանին մաղերը նախկին ժալը չունենան եւ ակաւայները նախկին սպիտակութիւնն ու սրութիւնն:

Եւ ինչքան անբարեւոյց ոյք կ'արժէին հաւաքուիլ: Վերջին կէս դարու մէջ չեմ կարծեր որ քարոզիչ մը գտնուէր այնքան ժողովուրդի վրայ ազդեցութիւն ունեցող որքան էր Մատթէոս Կաթողիկոս երբ քարոզիչ էր Օրթաքիւղ:

Մեծ պահքի կիրակի երեկոյներն Օրթագիւղի եկեղեցոյ չընծայէն այնպիսի տեսարան մը կ'ընծայէին որպէս չընծայէր ո'չ մի պարահանդէսի գիշեր Բերայի ո'ր է թատրոն: Մատթէոս Պատրիարքի քարոզները լըսելու համար ամէն կողմերէ կառքերով հասնելու կը դիմէին յՕրթագիւղ: Քարոզիչ Սրբազանը սեղանին վրայ չընծայաւորած քահանայներէ իւր խօսքերու հմայից ներքեւ կը պահէ ժողովուրդը: Բայց իւր խիզճն հանդարտութեան կարօտ է կարծես: Մերթնդ մերթ գառնալով կը հարցնէ քահանայից.

— Այսպէս չէ՞, տէր Գալուստ:

— Ծառայ եմ, Սրբազան, այդպէս է, կը պատասխանէր ահաւի տէրութեն, — ինչպէս ահաւի էին այն ատենի բոլոր տէր-տէրները:

Միթէ քահանայներու համար ոսկեղար

մը չէ՞ր երբ նախկին Պատրիարք մը, ապագայ Կաթողիկոս մը, իւր խօսքերուն ոյժ տալու համար տէրութեններու կը դիմէր:

Կը պատմեն թէ Աւագ հինգշաբթի դի-չեր մը հռոմէական հայ վարդապետներ ծալտեալ աշխարհականի զգեստներով եւ դաւաճանելով իրենց կրօնական խղճահարութեան եկած խառնուած են Օրթաքիւղի եկեղեցոյ մէջ լուսաւորչական ժողովուրդեան, լսելու համար Մատթէոսի քարոզ-ներն:

Եւ, ահա՛ մեր խելքի անյողդողդու-թիւնն, այդ սեղանէն մի քանի տարի վերջ կը լսուէին այնպիսի խօսքեր ոյք կը հարկա-դրէին զմեզ խցել մեր ականջներն:

Մաղկապարդի իրիկուն մը, քարոզիչ եպիսկոպոսը ժողովուրդեան կ'ըսէր — Բայց արի՛ տես ինչ որ եկեղեցոյ բեմէն կ'ըսուի, լսողի մը մէջ գրեւոր գիտելութիւն կ'ու-նենանք, բայց մեղքը մերը չէ:

«Աւանակներ էք, էշեր էք, աւանակ ող-լու աւանակներ էք» — Եւ քարոզիչն որ սը-րախօսութիւն ընել կը կարծէր, մի քիչ կանգ կ'առնուր տեսնելու թէ ինչ տա-ւորութիւն կը թողուն ժողովուրդեան վրայ իւր խօսքերն եւ յետոյ հրճուանօք կը շա-րունակէր:

«Բայց իմ էշերս չէք, բայց իմ աւանակ-ներս չէք — աղէկ ազատեցանք, — հապա-Քրիստոսի էշերն էք, Քրիստոսի աւանակ-ներն ենք» — Եւ ժողովուրդի մէջէն պա-կաս չէին որք երեսին խաչակրելով կ'ը-սէին. «Խոստովանիմ եւ հաւատամ»:

Եպիսկոպոսի ձայնը զարհուրելի տեսա-կէն որոտնդոստ էր, եւ նոյն շարժումն Պարոնեան Թաթարին մէջ կը գրէր թէ Օր-թագիւղի քարոզիչն ձայնը կը լսուէր մինչեւ նաւամատոյցէն որ եկեղեցիէն բաւական հեռու է: Եւ եպիսկոպոսն յաջորդ կիրակին կը պատասխանէր — միշտ սեղանին վրայէն.

— Ես ինչ ընեմ որ առ զազեթաճիւն ականջներն այնքան երկայն են որ այնքան հեռու տեղէն ձայնս կը լսէ:

Այդ եպիսկոպոսն որ կենդանաբանա-կան հրճուանքները կը սիրէր այսքան, պատ-րիարքական տեղապահ եղաւ, եւ ապահով էր Պատրիարք ինեւրոն — Խրիստեանի յաջորդ եւ Ներսէսի նախորդ — Եթէ մի առաւօտ . . . բաղդաբար իբր նախաճաշիկ մի քաչ Կեսարիոյ ապուխտ ուտելով չճանապար-հորդէր անգլի աշխարհն, — Կարծեմ՝ Կե-սարիա քան զայս աւելի մեծ ծառայութիւն մը չէ մատուցած հայ ազգին:

ՀՐԱՋՈՒՆ

Յ. Գ. Յորմէ հետէ Գուրգէն էֆ.ի այ-ցետուն մը զրկեցինք Արեւելի միջոցաւ վը-րան P. P. G. գրուած, որ ներկայի մը հա-մար քաղաքապարական ձեւ մ'է իւր դուռն ուրիշի մը առջեւ փակելու, ինքն ալ այլ եւս իւր ճաշին Արեւելի չըրկեր. վերջա-պէս Բայց որովհետեւ չարժեք երեք դա-հեկան տալ եւ գնել, հետեւաբար պէտք է սպասել բարեկամներու բարետրտութեան որ էն ծիծաղելի կէտերը մեզ զրկեն: Եւ չեն պակսիր այդպիսի բարեկամներ: Մար-տի տետրակը զրկեցին: Պ. Ս. Գ., նախնեաց այդ քաղաքապարական, հետեւեալ կը գրէ. ի միջի այլոց առ Երեւան:

«Աղէ, միթէ եւ դու իբրեւ զէ . . . (2) «ունի բանդադուլէս, խեղճատակես եւ ծաղր ճառես. եւ կամ ձաղել եւ անարգել կա-միլցես զգարմանալին, զանգին եւ զչնաչ-«խարհիկ բարբառն մերոց նախնեաց, զաղ-բեւերն անսպառ, յորմէ կամք եւ փոխ առ-«նումը անդադար բանս, ասացուածս եւ

«ունի ի պէտս ռամիկ բարբառոյն զոր ի կիր «արկանեմք այսօր: Միթէ եւ դու զոսկին «ոսպ համարես իբրեւ զնա. եթէ այս-«պէս՝ ապա հարկ է թէ եւ ոսպն ձեզ ոսկի «իցէ: (2)»

Եւ Գուրգէն էֆ. (2) ի ներքեւ մոլեգնա-բար կ'ըսէ.

«(2) Ձէ ինչ արժանի ի հանդիսի աստ «ոզլ ամեւ զանունդ (այսինքն Հրազդան «ըսել կ'ուզէ), որ է զուգական (==) տղի-«տութեան եւ ստութեան»:

Ինչպէս կ'երեւի դիտուն եւ ճշմարտա-խօս երեւնալու համար պէտք է որ Գուր-գէն էֆ.ի պէս արեւն ու արշալոյսն իրա-րու հետ չփոխել ինչ որ մեր կարողութենէ վեր է: Չեմ զարմանար Գուրգէն էֆ.ի այս տրամաբանութեան վրայ, եւ թէ ինչո՞ւ: Օր մը երբ այցելեցի Ազգ. Հիւանդանոցն, յիմարանոցին մէջ խենդ մը ցոյց տուին որ հանդարտ, խելօքիկ նստած էր. միայն թէ երբ «Պետրոս աղայ» կ'ըսէին, մարդն ինքն իրմէն դուրս կ'ելնէր, կը մոլեգնէր, — կայ-սահարէր, վերջապէս կատարեալ խենդ մ'էր: Գուրգէն էֆ.ն ալ շատ կը նմանի այդ մարդուն: Հանդարտ կը նստի, ծանր կեր-պով կը գրէ իւր ճաշին, իրաւ անհասկա-նալի է, տխուր է, բայց չեմ կարծեր որ մէջը մոլեգին բացատրութիւն մը գտնուէր — Բայց, իւր դժբաղդութենէն, Ս. Գ. կը հնչէ Հրազդան անունն, եւ Գուրգէն էֆ. այդ անունը լսածին պէս նման Հիւանդա-նոցի յիմարին կը մոլեգնի, կը խենդենայ, ըսածը թողածը կը մոռնայ:

Աստուած գթայ իրեն:

Հ.

ՔԱԼԱՆԹԱՐԱՆԵՑ ԵՒ ԳՐԱՍԵՐ ԱՏՈՄ

Տակաւին պաշտօն էի վարում Չմիւռնիոյ թեմում, երբ Արեւելի մէջ հրատարակու-էին հմուտ մանկավարժ Պ. Գ. Քալանթար-եանցի դասախօսութեանց ծրագրերն ու յօդուածներն. իւրովի ուրախանում էի տեսնելով նրա անձնութիւնը:

Հաւատացած էի՝ որ Կ. Պոլսոյ ազգա-յինք ընդհանրապէս ինքնուրու լինելով պիտի գրուային նրա աշխատութիւնը քաջալերելու համար. դժբաղդաբար ոմանք, վիշայ պսակներ են բոլորում նրա ճակա-տին: Ինքնին ստուգ էի գուցէ իրաւունք ունին. վասն որոյ փափաքում էի մի անգամ ներկայ լինել:

15 մարտ կէս օրից յետոյ, գնացի Ղա-լաթայի կեդրոնական վարժարանը. չնա-յելով ցեխին, անձրեւին՝ խուսերով դի-մում էին ազգայինք, որոշեալ ժաման եկաւ Պ. Քալանթարեանց. զարմանքս եւ ուրախու-թիւնս մեծ էին. 1882 թուին, Թիֆլիզում «Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովում» տեսած էի, նախաձեռնութեան էինք . . .

Ներք դասախօսութեանց եւս ներկայ գտնուեցայ, ուղադրութեամբ ականջ դրի:

Խօսում էր պարզ, անսեթեւեթ ոճով, առանց հետտրտական արհեստի օգնու-թեան, տրամաբանօրէն, որպէս արդի դիտ-նական մի ճառեց ճաշակեւեաց եւ հստո-տեւեաց վերայ իբր քաջ հոգեբան:

Բարբառային վարդապետութեան դասախօսու-թիւնը նմանապէս պարզ, գործնական օրի-նակներով, անհերքելի ապացոյցներով խօ-սեց իբրեւ մի եւրոպացի դիտնական:

Մանկավարժութեան դասն իմ մէջ ար-թընցուց յիշատակներ. երբ նա խօսում էր

մանկական պարտիզի, թուրքաճաճութեան, գեղարուեստի, լեզուի, բարոյագիտութեան նախնական դասերի վերայ, աչքերիս առաջը կ'գար երջանկայիշատակ Ա. Բաճաղբեանի ուրուականը. կարծէի դատ կ'արար ինձ. կեղծ-րոնական Արթուրան ինձ թուում էր թէ Ներսիսեան դպրանոցն է . . . :

Ո՞հանք նկատելով Ռուսահայ լինելու հար-ցանում էին .

—Քալանթարեանց կը հաւասարի՞ Բաճա-ղբեանի :

Անմեղ հարցին հարկաւոր էր ճշմարիտ պատասխան .

—Եթէ չ'հաւասարի, ասացի, չէ կարող ասպարէզ լինել :

Մի Էսէֆան պարտէլէ, որ Արամազդի պէս վեհ գիրքով կանգնած, հակամիտած էր ինձ հասարակ մահկանացուների կարող դասել, որոշումը փոխեց, զիջաւ ինձ մօտ գալով հարցնել .

—Դու ալ մանկավարժ ես . . .

—Այո՛, կամ ո՛չ — պատասխանեցի :

Մինչդեռ այս փքուռոյց Գեֆանի Ուրմ-պոս աւարանան էի դիտում, մի ուրիշ Բաճաղբեան պարտէլէ ինձ կարկառեց Գրաւոր Ա. Գրաւորի Գրաւորի եւ Իմաստասիրական Շար-ժուում հանդիսի փետրուար ամսաթերթին, մատնանիլ ցոյց տալով Պ. Քալանթարեանի Գրա-ւորական վերնագրով յօդուածը :

Կարդացի մեքենապէս, բայց աչացս չի հաւատալով . —միթէ Գրաւոր Ա. Գրաւորն է այ՛, Բաճաղբեանը . . . :

Որպէս Քալանթարեանց, նոյնպէս էլ Գրա-ւորն իմ սրտում հաւասար տեղ էին գրա-ւում : Պ. Ա. Գրաւորն սիրում էի բայց սխալ էր պատուախնդիր լինել, ես էլ Ռուսահայ եմ :

Գրաւորն Ռուսահայուն նմանեցնում եւ բաղդատում է ամերիկացի Գեֆանին հետ :

Պ. Քալանթարեանցի դասախօսութեանց երկու անգամ ներկայ լինելով Երեւանի հան-դարտեցնէ, կ'որոշէ այլ եւս չ'դնալ, այն էլ Ռուսահայ է եղբէր :

Պ. Գրաւորն այն ժամանակ իրաւունք ունէր Ռուսահայ մանկավարժը համեմատել եւ նմանեցնել ամերիկացի քարոզչի, երբ այս երկու տարբեր սկզբանց առաքելաբ-մի եւ նոյն նպատակն ունեցած լինէին . ի-րօք, ամերիկացին մեղ կռապաշտ, վայրենի, միով բանիւ ստորին ժողովուրդ է համա-րում : Բայց Ռուսահայ մի երբէք բոլոր Տաճ-կահայոց տգէտ անուանած չ'ունի . միտիո-նարն իւր շահերի համար է այդպէս ներ-կայացնում : Բայց Ռուսահայը շահ չ'ունի ան-ուանարկելում, քարոզիչը կրօնի եւ ուղ-ղութեան ուսման է, իսկ հայ ուսուցիչը՝ տը-գիտութեան եւ նախապաշարման : Նորա՝ քանդում են ազգի տունը, սոքա շինում են, նորա՝ խաւար, մուլութիւն, մուլեռանդու-թիւն են տարածում : Ներհաճ ժողովրդի մէջ, սոքա լոյս եւ գիտութիւն . այս երկու տարբեր ուղղութիւն ունեցողք չէ կարելի իրար նմանեցնել, չափով, սկզբունքով եւ ամէն ինչով միմեանց հակառակ են : Առաջ-նոց գիտադրելու իրաւունք ունի ամէն ան-հատ . . . : Ուրեմն մի եւ նոյն չ'են : միտիո-նարն եւ հայ ուսուցիչն :

Ուրիշ բան է մասնագիտութիւնն, ուրիշ բան է մանկավարժութիւնն, չէ պահանջ-ւում ամէն գիտնականից մանկավարժու-թիւն . անհատը մասնագէտ եւ ոչ ամենա-գէտ կարող է լինել . ամէն մանկավարժ գիտնական չէ կարող լինել : Ա. Պոլսոյ վար-ժապետներին 1/8 մասը չ'գիտէ մանկավար-ժութիւն . գիցուք թէ ոմանք գիտեն : Բայց նորա չ'են արուարձանաց վարժապետների պատասխանատուներն . ուրեմն, քանի որ

մեծ ամասնութիւնը տգէտ է արհեստի մէջ, պարտաւոր են, քիչ շատ դաւաճար ունե-նալ ուղղութիւն տալ վարժարանների, կա-նոններ դիտեալ եւ այնպէս դասախօսել : Պ. Քալանթարեանց դասախօսելով ոչ թէ ու-սուցանում է Գեֆանի գիտութիւն, հապա, ուսուցչի կոչումն ունեցողի ուսուցչական մասնագիտութիւն : Ուրեմն, այս հանգա-մանքներն գիտեալով, Պ. Քալանթարեանց դպրոցների յառաջդիմութեան դադանակ եւ ուսուցչական մարմնոյն անհուրաբար անհաճախելի մենտոր ուղղութիւն լինել իւր ազգին ծառայելու համար . չ'կարծեմ որ Պ. Քալանթարեանցի նման մի զարգացած երի-տասարդ, քաջիմաց մանկավարժ, զիջ չ'ի ու-սուցչաց տգէտ անուանել . որովհետեւ մե-ղաւոր չէ այն դասաւանդ . որ չ'գիտէ ման-կան դաստիարակելու արհեստն :

Պ. Եղիա Տէմիրճիալաւեան ասում է՝ «Ես դպրոցական էի երբ Էֆէ կարդացի, դպրո-ցէն դուրս ալ Էֆէի վրայ գնահատական դրուածներ . ես կարդացած եմ ձեր յիշած մանկավարժներն ու իմաստասէրներն . եւ հեղինակաց ընթերցմամբ չ'աւանդուելով մաս-նաւոր հանդէսներ ալ կ'ընթերցում : Եւ կան թրքահայ ուսուցչաց մէջ որք ըրած են եւ կ'ընեն նոյն բանն : Ես այն պայմանաւ ձեր ներկայացուցած թուղթին տակ ստո-րագրեցի, որ դուք ալ յարգէիք թրքահայ ուսուցիչներն, ոյց ոմանք՝ ըսի՝ ձեռնէ նոր ծանօթութիւն մը չ'ալիսի ստանային : »

Արդ՝ ամեն աշակերտ էլ կարող է կար-գալ ձեռն ինկած գիրքն, մի եւ նոյն գործն կարող է կարգալ մի քանի անգամ, բայց Կարդացի անելով չէ կարելի ազատիլ . ուրիշ բան է աչքից անցնել ուրիշ բան է կարգալ եւ ուրիշ բան է ուսումնասիրել :

Դիցուք ինք՝ Գրաւորն ուսումնասիրած է Էֆէի, Ժ. Ժ. Ռուսոյի, Բէստալոսի, Ֆոլ-պէլի եւ. գերման եւ գալլիացի հին եւ նոր մանկավարժների գրութիւնը, բայց ենթա-գրելու էլ իրաւունք չ'ունի թէ ամէն դա-սաւոր կարդացած է : Ով որ ուսումնասի-րած է Էֆէի, Պ. Քալանթարեանի ասելով կրկին ուսումնասիրել ազատ է : Բայց ով որ չ'լսած է անունն անգամ, եթէ ուզում է զարգանալ իւր արհեստի մէջ, անուշտ կար-գալու է Էֆէի, Հէրպէրդ Սպենսերի, կամ Պէնի եւ այլոց հոյակապ գործերն : Պ. Քա-լանթարեանցի խօսքն այսպիսեաց, ոչ արդէն ուսումնասիրողների է պատկանում, եւ այդ էլ ոչ լուստանք, ոչ գայթակղութեան ա-ռիթ եւ ոչ էլ Տաճկահայ ուսուցիչի անար-գանք է :

ՈՐՍԿԱՆ

ՁԵՌՆԱԾՈՒԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Ա. Պոլսոյ թատերական բեմերու վրա, շատ անգամներ առիթ եղած է տեսնել եւ-րոպացի հռչակաւոր ձեռնածուներ, որ ի-րենց ձեռնածուական փորձերով զարմանք եւ ապշութիւն պատճառած են եւ կը պատ-ճառեն որպէս գիտուն եւ նոյնպէս տգէտ մարդոց : Հանդիսականն երբ կը տեսնէ որ ձեռնածուն ափինոյ մը ձեռնոցը կը հանէ լիմոնի մը մէջէն, ջուրով լի բազմաթիւ ա-մաններ կը հանէ ոչնչէն, ձուկերով միասին, հանդիսականն երբ կը տեսնէ այս եւ այս . սրտի անթիւ փորձեր կը մնայ ապշած, եւ ոչ նուազ անգամ իւր ակնարկը ներկայից վրայ աւտացնելէ յետոյ կը դարձնէ դէպ ի ձեռնածուի երեսն եւ իւր հայեցողութեան

համայն ոյժը կը կեդրոնացնէ նորա գէմքի վրայ, ուզելով նկատել անդ այն գերբնա-կան զօրութիւնն, որի շնորհիւ կ'ընէ այդ տարօրինակ փորձերն եւ որմէ զուրկ են մահկանացու մարդիկ : Սակայն այդ ամեն ձեռնածուութիւններն բնաւ հիմնուած չ'են գերբնական, մեղ իմական ոյժերու կամ նախապատրաստուած մեքենաներու վրայ : Ընդհակառակն, նորա հիմնուած են ամենա-պարզ եւ տարրական արագաձեռնութեանց վրայ : Մարդուս միտքն այնպէս տարօրինակ է ստեղծուած, որ իրեն զարմացում պատ-ճառող երեւոյթներու լուծումը կը փնտռէ հեռուն, մառախուղի մէջ, գիտութեան եւ ենթադրութեանց մէջ, մինչդեռ այդ լու-ծումը կը գտնուի բուն իսկ մեր առաջ, մեր ձեռքի տակ :

Սոյն փորձերու պարզութիւնը ցոյց տա-լու համար ուստական Նիշ-պատկերազարդ շարժաթերթէն առնելով, այսուհետեւ կ'սկսինք հրատարակել այդ փորձերու նկա-րագիրն :

ՄԵԼԱՆԸ ԶՈՒՐԻ ՓՈԽԵԼ

Մեկանը ջուրի փոխելը կը թուի իբր ան-լուծելի խնդիր, սակայն դիւրաւ կարելի է հասնիլ այդ նպատակին միայն թէ հարկ է ունենալ քիչ շատ ճարտիկութիւն : Ձեռնա-ծուն այս փորձը կատարելու համար կ'առ-նու մի բաժակ եւ կիսով չափ ջուրով կը լնու դայն : Ապա սեւ մետաքսի կամ քաշ-միրի պատտառէն կը կտրէ շրջա մը, համա-չափ բաժակի մէջ եղած ջուրի բարձրու-թեան, եւ այդու կը շրջափակէ բաժակը, բնականաբար ներսի կողմէն : Այս վիճակի մէջ բաժակն որովհետեւ հեռութեամբ այնպէս կ'երեւի որ մեկանով լի է :

Բաց աստի ձեռնածուն պատրաստ կ'ու-նենայ թղթախաղի ձեւով եւ հաստու-թեամբ քառանկյունի թուղթ մը որի մէկ երեսն բոլորովին սպիտակ է, նմանապէս եւ միւսն, սակայն այդ երկրորդ երեսի մասը սեւ է մինչեւ մի որոշեալ սահման : Ձեռնա-ծուն առնելով այդ թուղթն սպիտակ երե-սէն ճարտիկօրէն դայն ցոյց կուտայ հասա-րակութեան, այնպէս որ հասարակութիւնը չի տեսներ թուղթի երկրորդ երեսը : Բազ-մաթեան լաւ մը ցոյց տալէ յետոյ թուղթի մէկ ծայրէն բռնած նոյն զիւրքով կ'ընեն ջուրի մէջ. սոյն պահուն հասարակութեան անտեսանելի ճարտիկութեամբ թուղթը կը դարձնէ, մեկանոտ երեսն հասարակութեան կողմը դարձնելով իսկ բոլորովին սպիտակ երեսն՝ հակառակ կողմը : Բաժակի մէջէն դուրս հանելով թուղթն այս անգամ ցոյց կուտայ սեւ կողմն որ կը ծառայէ իբր ա-պացոյց թէ արդարեւ բաժակի մէջ գտնու-ւածը մեկն է : Ապա այդ կարծեցեալ մե-կանը ջուրի փոխելու համար թաշկինակով կը ծածկէ բաժակը թաշկինակի կենտրոնէն բռնած, եւ զգուշութեամբ կը ջանայ սեւ լաթը դուրս հանել, յաջողելուն պէս կը վերցնէ թաշկինակն եւ նորա մէջ պահուած լաթն : Եւ հեղուկն այս անգամ հանդիսա-կանաց աչքին կը ներկայանայ այն ինչ որ էր իսկապէս, այսինքն ջուր : Ինչպէս կը տեսնուի ամէն մարդ կարող է կատարել այս փորձը : Ճարտիկօրէն կատարուած այս պարզ ձեռնածուութիւնը միշտ խորին զար-մանք եւ ապշութիւն կը պատճառէ :

ՄԵՏԱՂՆԵՐՆ ՅԱՐԳԻ ՊԵՍ ԿԸ ԼՈՂԱՆ

Այս փորձն հեղուկ մարմնոց մաշակա-

նույն ժամանակ և այսինքն հեղուկ մարմինը առանձին մասնիկներու միջև փոխադարձ ներգործութեան աստիճաններու Պէտք է վերցնել արդարաւոր ասեղմը եւ դնել պատուաքաղի կամ ոլորած պղնձաթելի վրայ, ապա այդ պատուաքաղը կամ պղնձաթելը պէտք է զգուշութեամբ իջնցնել ջուրով լի բաժակին մէջ: Ասեղն հանդարտութեամբ ջուրի մակերեսէն զննելէ յետոյ այն կէտին կը հասնին որ այդ ասեղն յարգի նրման կ'սկսի լողալ ջուրի երեսին: Այս այսպէս լինելու պատճառն այն է որ պողպատը չի թրջուիր ջուրէն եւ նորա չըմպատը կը կազմուի կորնթարդութիւն եւ գոգաւորութիւն, որի ծաւալը խիստ մեծ է լողացող մարմնի բաղդատմամբ: Այս կերպիւ հեղուկ մարմնի ընտելը, միւտ արտաքուստը մարմնէն, կամ հեղուկ նիւթի մազականութեան ներգործութենէն կարելի է ըստանալ այն մի եւ նոյն կշիռը զոր ունի լողացող մարմինն: այս պատճառաւ եւ այն մարմինը չի խորատուցուիր ջուրի մէջ: Փորձի դիւրին յաջողութեան համար հարկ է փոքր ինչ աղէկ ասեղն, սորա համար եւս կը բաւէ միայն ասեղն մէկ անգամ անցնել մասններու մէջ տեղէն:

Այս փորձը կարելի է ուրիշ տեսակի եւս կատարել: Ջուրի մակերեսէն պէտք է զետեղել սիկատի թուղթ մը եւ ապա նորա վրայ զգուշութեամբ դնել ասեղն: Թուղթը շուտով կը թրջուի եւ կը սուզուի, իսկ ասեղն կը մնայ ջուրի երեսին: Այս եղանակաւ կարելի եղած է ջուրի վրայ պահել պղնձաթել եւ մինչեւ անգամ չ'ինք ֆրանքնոց ոսկի դրամ: Այս մի եւ նոյն փորձը կարելի է կատարել եւ մետաղեայ գրիչի վրայ, եւս պիտի տեսնէք որ գրիչը հիւսնայի կերպով կը լողայ ջուրի վրայ: Իսկ եթէ այդ գրիչը նախապէս մազնիւտացուի, այն ժամանակ կ'ստանաք կատարեալ բեւեռացոյց մը:

Պ. Տ.

ՂԱՐԱԲԱՂԻ

(5)

ԱՍՏՂԱԳԵՏԸ

Ե.

ԳԵՂԵՅԻԿ ՍԱԼԻԶԱՆ

Ջուռուզդ այսպէս շարունակեց: «Ահա դարձաւ ծերունին շատ ուշ, իր երկու զաւակացն հետ, եւ խնդրեց ինձմէ մտնել տաղաւարն ուր պատրաստուած էր ընթրիքն: Այնտեղ տեսայ նորա կիներն որոյ անկեղծ եւ ուրախ կերպարանքը խիստ հաճելի թուեցաւ ինձ: Կնոջ մօտէն էր ծերունեայ դուստրը, տառն եւ վեց տարեկան մի աղջիկ որ մեզ համար ոչխարի կաթ կը պատրաստէր: Գգուանք նայեցաւ ինձ եւ զլիով թեթեւ մը ողջունեց զիս: Այն, սիրելի աստղագէտս, երկնից վրայ գտնուած բոլոր աստղերը կարող չէին համեմատուիլ նորա սեւ աչքերու փայլին հետ: Նորա զէմքն այրած էր արեւէն եւ այդ զէմքի վրայ նըկարուած էր մի տեսակ կախարդիչ հրապուանք: Կարող չէի աչքերս հեռացնել նորա երեսէն եւ խորին հոգեզմայլմամբ դադատուի կը նայէի սքանչելի Սալիհայի վրայ:

Ես բնակեցայ այդ բարեօրրոտ ընտանեաց հետ եւ ամէն օր բախտ ունէի տես:

Ներու իմ նազելի Սալիհան: Այդ աղջիկ որ միացուցած էր իւր պարզամտութեան հետ ուրախ եւ կենդանի բնաւորութիւն, օր ըստ օրէ աւելի կը դրաւէր իմ սիրտը: Նա զիս քաբաշ կը կոչէր եւ կ'երեւէր որ իմ ներկայութիւնս իրեն զօհունակութիւն կը պատճառէր: Այդ երջանիկ լեռնաբնակներու բարուց ու վարուց պարզութիւնը կը ներէր որ երկու սեռերն միշտ զիրար տեսնեն, ուրեմն ես կարող էի միշտ Սալիհային հետ տեսնուիլ եւ հրճուիլ:

Շատ անգամ նորա եղբարց հետ ձիով դրօնելու կ'երթայինք: Կը սիրէինք սանձահարել խտտերախ նոյնքները, նստիլ նոցա վրայ, թռչիլ ահաւելի ժայռերու վրայ եւ կամ վազել սարսափելի զառիվայրէրէ: Այդ ձիերու վրայ կը կատարէինք զանազան տեսակ խաղեր, եւ լեռնապաններու ամէն մարդանայ կը վարժէինք: Եւ ես ամէն օր կը սովորէի աւելի եւս ճարպիկ լինել եւ քաջ ձիավարել: Սալիհայի եղբայրներու հետ աւելի մտերիմ էի բան: Մի սերտ բարեկամ:

Եւ Սալիհան կը սիրէր զիս ամենաձերմ սիրով: Այդ սէրը կը փայլէր նորա աչաց մէջ, բայց նա կը սիրէր զիս իբր եղբայր, իբր միակ բարեկամ: Շատ անգամ կը պատահէր ինձ միայնակ մնալ Սալիհայի հետ, նորա մայրը միամիտ կին կը մտածէր միայն տնային անտեսութեան վրայ, եւ ես կ'օգնէի աղջկան աշխատութիւններուն: Երբեմն նորա հետ լեռները կ'երթային ջուր բերելու առուակներէն: այն ատեն կամաւ զանգաղ կ'ընթանայինք: Կը քաջէի գեղեցիկ ծաղիկներ զորս կուտայի Սալիհային: Եւ նա կ'ուրախանար որպէս մի երախայ: Կը սեղմէի զնա իմ կուրծքիս վրայ եւ կը համարէի նորա ճիւղն: Նման կարմիր չիթ ունեւորէի: չէր դիմադրեր ինձ Սալիհան: Ուսիս վրայ կը դնէր գեղեցիկ գլուխն եւ քնքոյշ նայուածքներով ինձ կ'ըսէր.

— Եղբայր, դու զիս միշտ պիտի սիրե՞ս:

Եւ ես կը խոստանայի նորա մշտական սէր եւ բարեկամութիւն:

Այդ դրութեան մէջ էին մեր յարաբերութիւններն երբ հասաւ ժամանակն յորում հարկ եղաւ իջնել լեռներէն եւ բնակիլ Թափարակներուն վրայ:

Գու շատ ըսւ գիտես թէ Ղարաբաղի բոլոր խաչնարած ցեղերը գարնան սկիզբը կ'սկսին հեռանալ դէպ ի լեռներն: Հետեւ հետէ աստիճանաբար կը բարձրանան լեռներու վրայ այն չափով ինչ չափով որ կը սաստկանայ արեգակի տօթը որ կը ցամքեցնէ բոյսերը տափարակներու վրայ եւ անհնարին կը լինի մարդկանց ապրիլ դաշտերն:

Երբ կ'սկսի աշուն, այդ խաչնարածներն եւս կ'սկսին փոքր առ փոքր իջնել լեռներէն՝ որոց վրայ ցուրտն արդէն սկսած է զգալի լինել: Իսկ ամենը վերստին կը բնակին իրենց ձմեռանային խրճիթներու մէջ՝ որը փորուած են դեռնի տակ:

Այսպէս Ջուռուզիցիք վերադարձան ամառանցներէն եւ բնակեցան իրենց ձմեռանային գետնափոր խրճիթներն: Այդ ժամանակ պատահեցաւ մի դէպք որ մեծ ազդեցութիւն ունեցաւ կեանքիս վրայ:

Քարիբլուցիները քչեցին տարին մեր ձիերը: Ջուռուզիցիք սաստիկ վրդովուած որոշեցին վրէժ լուծել: Բոլոր ընտիր ձիաւորներն հաւաքուեցան եւ ուխտեցին ասպատակել Քարիբլուցիներու ձմեռանոցն: Ես ալ մասնակցեցայ այդ արշաւանաց: Սալիհայի երէց եղբայրն եւ մինչեւ իսկ ծերունի հայրը միացան քաջերուն, հաւաքակ մեր թախանձանաց: Գիւրէր էր երբ

ճանապարհ ինկանք: բոլոր կիները կը նընջէին, եւ կարող չեղայ մնաք բարով ըսել Սալիհային:

Հետեւեալ գիշերն հասանք Քարիբլուցիներու ձմեռանոցը: Գիշերային մութը նըպաստեց մեզ մտնելու այն տեղին ուր պահուած էին մեր եւ նոցա ձիերու երամակները: Կոտորեցինք պահապանները, քչեցինք նոցա երամակներն եւ ոչխարներու հօտերը մեզ մօտ: Բայց խաւարը թոյլ չի տուաւ մեզ նկատել որ հովիւներէն մին կարող եղաւ փախչիլ եւ իմացնել Քարիբլուցիներու մեր յարձակումը:

Քարիբլուցիք անխնայութի մը մէջ պատրաստուելով մեր ետեւէն ինկան: Մանրաբեռնեալ հարուստ աւարով չէինք կրնար արագաբար հեռանալ: միւս օր կէս օրին հասան Քարիբլուցիք մեր ետեւէն: Եւ պաշարեցին զմեզ, կռւին արիւնահեղ եղաւ: Քարիբլուցիք յաղթող հանդիսացան: Կորուսինք շատ երիտասարդներ, խուլացինք ամբողջ աւարն եւ ստիպուեցանք փախչելով ազատիլ Սալիհայն Սալիհայի հայրը կուրծքէն մահացու վէրք ստացաւ եւ նկաւ առանց բաւ մը կարենալ արտասանելու: Ես ալ վերք ստացայ գլխիս վրայ եւ կորսնցուցի շատ արիւն:

Երբ մօտեցանք մեր ձմեռանոցներուն, բոլոր կանայք մեզ ընդ առաջ եկան: Պատրաստուած էին նոքա ուրախութեամբ ընդունիլ զմեզ, բայց երբ տեսան եղած զրգբաղդութիւնն սկսան լալ ու կոծել: Ամէն տուն կորուստ մը ունէր: ամէն տան մէջ ողբ ու լաց: Սալիհայի մայրը կուլար իւր սպաննուած ամուսնոյն համար: իսկ Սալիհան գոհաթափ, կիսամեռ ինձ կը նայէր արտասուելից գեղեցիկ աչքերով:

Սալիհան սկսաւ հոգ տանիլ իմ առողջութեան: պատրաստեց ինձ հանգիստ անկողին: Սալիհայի մեծ եղբայրն ալ գիրաւորուած էր, բայց աղջիկն աւելի խնամք կը տանէր ինձ բան իւր եղբոր:

Այս վերջինն շուտ առողջացաւ եւ շատ անգամ իւր եղբոր հետ անտառը կ'երթար որսի: Մայրն զբաղած էր տնային գործերով եւ ես կը վայելէի աննման Սալիհայիս հետ միայնակ մնալու բախտը:

Սալիհա գորովայն ու շաղկապեալ կը գուշակէր բոլորն ինչ որ պէտք ունէի: Երբեմն շարունակ մի քանի ժամ կ'անցնէր անկողնոյս մօտ: քրտնալիքեալ ինձ նայելով: Այն, ինչպէս բերկրութեամբ կը լեցնէին զիս այդ բաղնիքն: Արբան շնորհակալ կ'ըլլայի Աստուծոյ աստուած վերբիս համար եւ բոլոր այն տառապանաց մասին զոր կը կրէի այդ վերքի պատճառաւ:

Օր մը Սալիհայի եղբայրները տունը չէին: Մայրը գիտցած էր մերձակայ անտառը ցախ հաւաքելու, եւ եւ Սալիհան միայնակ էինք խրճիթին մէջ: Թէպէտ ամեն բայց բաւական տաք էր: Ես արդէն բոլորովին առողջացած կ'զգայի անձս, զլիսի վէրքը բոլորովին բուժուած էր: Սալիհան ուրախանալով իմ առողջութեանս վրայ նոյն օրն աւելի զուարթ էր քան ուրիշ օրեր եւ աւելի հրապուրիչ քան երբեք: Նստած էր ըովս եւ իւր սովորութեան համեմատ կը նայէր աչքերուս մէջ: Քաջեցի զինքը դէպ ի յիս: չընդդիմացաւ: Գրկեցի զնա, կը համբուրէի եւ կ'սքանչանայի կեանքի մէջ մարդուս վայելած ամենաքանդելի բողբոջով: Նոյնպէս Սալիհան կը սեղմէր զիս իւր կուրծքին վրայ, խորին հրճուանքի մէջ էր: Նա կատարեալապէս բարեբախտ կը համարէր զինքն, իւր անգիտութեամբն, իւր պարզամտութեամբն: իսկ ես, — ես արդէն

ղղջացած կը տանջուէի խղճի խայթով . . .

Ապագայն կը ներկայանար ինձ ամեն-
նաստարաւորի երեւոյթով: Գիտէի թէ ո՞ր-
քան խստաբարոյ են մեր լեռնաբնակներն
եւ եթէ իմանային ինչ որ պատահած էր
Սալիհային, խեղճ աղջկին արդէն կ'որոշուած
պէտք էր համարուէր: Իւր եղբայրներն ա-
ռաջինը կը լինէին զնա մահուան դատա-
պարտելու: Սոսկացի ամբողջ մարմնովս երբ
նայեցայ իմ նազելի Սալիհայի վրայ, որ ու-
րախ զուարթ, ժպիտն յերեսին կ'աթնած
էր իմ ուսին: Կ'երեւակայէի թէ կարելի էր
որ մի քանի րոպէ յետոյ նա արիւնթաթախ
կ'իյնայ իմ աչքերուս առաջ եւ կը մեռնի
զարհուրելի տանջանքներով:

Նորա կեանքն ազատելու համար ինձ
միայն մի միջոց կը մնար, պսակուիլ նորա
հետ: Բայց մի անդունդ կը բաժնէր զմեզ
իրարմէ: Նա մահմէտական էր, իսկ ես քրիս-
տոնեայ: Սալիհան կը զարմանար իմ լու-
թեանս եւ կը հարցնէր թէ արդեօք զարձ-
եալ տկա՞ր էի: Ես կը վախայի յայտնել
նմա իմ մտաւանջութիւններն եւ կը բա-
ւականանայի պատասխանելով թէ բոլորո-
վին առողջ եմ: Անսահման ուրախութիւն
կ'զգար խեղճ աղջկը լսելով այդ խօսքերն,
եւ ես չէի ուզեր զրկել գինքն իւր ուրա-
խութենէն յայտնելով թէ որդիսի՞ վտանգ
կ'սպառնար թէ իրեն եւ թէ ինձ: Բայց
սիրտս կտոր կտոր կը լինէր:

Սակայն ինչ որ ես կ'ուզէի ծածուկ
պահել, Սալիհան ինքն իւր պարզմտու-
թեամբն ամէն ինչ կը յայտնէ մօրն: Երբ
սա կը վերադառնայ տնտառէն նոյն րոպէին
աղջկը կը պատմէ նմա ամէն ինչ եւ ուրա-
խութեամբ կ'ըսէ թէ՝ թող շնորհաւորէ զիս
իբր իւր ամուսինը:

Պառաւը կը սոսկայ, եւ կ'արգիլէ աղ-
ջկանը ոչ մի բան ըսել այդ մասին իւր եղ-
բարց, եւ ինք լսելով ինձ կուգայ. կը հասկը-
նամ թէ Սալիհան ամէն ինչ խոստովա-
նած է:

—Ա՛խ, Մահմէտ, այս ինչ ըրիր, ըսաւ
պառաւն: Իմ ընտանիքս ամբողջ ծածկե-
ցիր: Խեղճ միտմիտ Սալիհայի կորստեան
պատճառ եղար: Միթէ աղ ո՞ր համար մենք
ընդունեցինք զքեզ մեր թշուառ մէջ իբր հա-
րազատ որդի:

Եւ խեղճ պառաւը կը հեկեկար, կ'ող-
բար, կ'ըսէր թէ՝ աղջկը պիտի քարկծուի,
թէ նորա եղբայրներու խէնջարները պիտի
ցցուին իմ կուրծքի մէջ:

—Ա՛խ, Ալլահ, առաջ փակէ իմ աչքերն
որ չտեսնեմ խեղճ Սալիհայիս մահը:

Դժբաղդաբար պատաւը կը խօսէր բար-
ձր ծայրով եւ Սալիհան որ կը գտնուէր
գետնափոր խրճիթի միւս կողմը լսեց պա-
ռաւին զարհուրելի խօսքերն: Հասկցաւ ա-
մէն ինչ, ներս վաղեց մեր ըով դէմքը գու-
նաթափ էր մեռելի նման. մի քանի րոպէ
լուռ կանգնած կեցաւ եւ յետոյ ինկաւ
գրեթէ ոտքերուս ներքեւ:

Թէ ինչ կրեցի այդ սարսափելի րո-
պէին, զայդ չեմ մտախոհ ամենաջար թըշ-
նամուս անգամ: Երկինք զիս սոսկալի կեր-
պով կը պատժէր իմ յանցանքի համար:

Այդ րոպէին մոռցայ ամէն ինչ. մոռ-
ցայ մեր կրօնքներու տարբերութիւնները,
մոռցայ հօրեղբայրս ալ, մոռցայ ամբողջ
աշխարհն ալ. միայն սրտիս ծայրին լսեցի
եւ գետնէն վեր առնելով կիսամեռ Սալիհան
պահեցի զնա գրկիս մէջ եւ ըսի.

—Հանգստացիր, իմ սիրելի եւ թան-
կազին ամուսինս, հանգստացիր եւ դու,
ո՞վ յարգելի մայր, փոխանակ տրտմութեան
թող ուրախութիւնը լեցնէ մեր սրտերն:

Ես յանցաւոր եմ ձեր առջեւ, բայց նոյն
խիւս աչսօր կը քաւեմ իմ յանցանքն: Երբ
վերադառնան Սալիհայի եղբարքն, իսկոյն կը
խնդրեմ նոցա հաճութիւնն իրենց քրոջ հետ
ամուսնանալու համար: Ինչ որ պատահած
է չենք յայտնել նոցա: Դո՛ւ, Սալիհաս, կը
լինիս իմ կինը, եւ դո՛ւ, մայրիկ, կ'ունենաս
մի նոր որդի:

Արտասանելով այդ խօսքերը կը մոռ-
նայի թէ կամ պիտի դաւաճանեմ իմ կրօն-
քիս կամ պիտի մեղանչեմ իմ խոստման դէմ:
Սալիհայի սարսափելի վիճակը միայն կը
տեսնէի եւ պատրաստ էի ամէն քայլ առ-
նուլ:

Զեմ կարող նկարագրել այն ուրախու-
թիւնն որ տեղի ունեցաւ իմ խօսքերէ յե-
տոյ: Սալիհան անսահման հոգեզմայլու-
թեամբ ինկաւ գրկացս մէջ: Նորա մայրը
չոքեց գետնի վրայ, կ'աղօթէր ինձ համար:

Զ.

ՋՈՒՄՇՈՒԴԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ՍԱԼԻՀՍԵԻ ՀԵՏ

«Երբ վերադարձան Սալիհայի եղբարքն,
եւ յայտնեցին նոցա իմ փախաւն ամուսնա-
նալու նոցա քրոջ հետ, Նոքա ուրախացան,
որովհետեւ զիս կը սիրէին եղբօր պէս: Ո-
րոշուեցաւ միւս օրը կատարել մեր ամուս-
նութեան խորհուրդը: Առաջին օրը մեր
խրճիթն հաւաքուեցան շատ էրիկմարդիկ
եւ կանայք. երկրորդ օրը կատարուեցաւ
խնայով ձեռք ներկելու սովորութիւնը. եր-
րորդ օրը կարգի էին դրուած պսակի խոր-
հուրդը կատարելու համար բոլոր պատրաս-
տութիւնը: Այդ օրը բազմաթիւ ընծայներ
ստացայ հարսնացուի ազգականներէն եւ
բարեկամներէն: Հաջուած էի փառաւորա-
պէս. ամէն ոք կը ջանար ինձ ցոյց տալ իւր
համակրութիւնն. ես այն օրը բոլոր հրա-
ւիրեալներուն պետն էի: Սալիհան հագած
էր իւր ամենաքեղ զգեստներն, օծուած
էր անուշահոտ իւղերով եւ կ'ստանար ըն-
ծայներ: Բոլոր կանայք հաւաքուած էին
նորա մօտը, կատակներ կ'ընէին եւ կը զը-
ւարձանէին զնա:

Հարսանիքի հանդէսը կատարելու ժա-
մանակ ինձ յատկացուցած էին մի առանձին
խրճիթ՝ որ բաւական հեռու էր Սալիհայի
խրճիթէն: Երբ ժամանակն հասաւ, նստայ
ձիու վրայ եւ բոլոր հիւրերուս ուղեկցու-
թեամբն գնացի Սալիհային ընդ առաջ: Նա
եւս ինձ կը մօտենար հակառակ կողմէն,
նոյնպէս ձիու վրայ նստած եւ յղապատ-
ուած իւր ազգականներէն ու բարեկամնե-
րէն: Զուանչիւրցիներու սովորութեան հա-
մեմատ, զեւ Սալիհան բոլորովին ինձ չմօ-
տեցած, ես նետեցի դէպ ի նա մի խնձոր
զոր այս նպատակաւ ձեռքս էի բռնած: Այդ
նշան էր խաղերն սկսելու համար: Այդ մի-
ջոցին Սալիհան որ նստած էր ամենալու-
նժողի մը վրայ, նետի նման սլացաւ դէպ ի
իւր բնակարանն: Իմ խուճին ինկաւ նորա
ետեւէն, նորա խուճը կ'ընդգիծադէր,
կ'աշխատէր օգնել փախստականին: Իսկ իմ
մարդերը կ'աշխատէին բռնել Սալիհայի ձիու
սանձէն եւ կասեցնել զայն: Երկար մրցում-
ներէ յետոյ, իմ խուճիւն մին կարող եղաւ
կասեցնել զնա: Մենք միացանք եւ ամբողջ
խուճերով դիմեցինք դէպ ի իմ բնակա-
րանն:

Երբ հասանք խրճիթիս առաջ, սկսեցի
խնդրել Սալիհայէն որ թնէ ձիւն, ինձ ձայ-
նակեցան եւ նորա բոլոր ազգականները:

Բայց կանայք որ կ'ուղեկցէին Սալիհային,
յորդորեցին զնա չկատարել իմ խնդրը:
Այդ արարողութեանց համար տեղի ունե-
ցան երկար հակաճառութիւններ: Վերջա-
պէս Սալիհան ձիւն իջաւ. ես ընդունեցի
զնա եւ հանգիստաւ կերպով ներս տարի
իմ խրճիթը:

Մօլան պատրաստ էր: Նա կատարեց
պսակի խորհուրդն: Յետոյ ամէնքն հաւաք-
ուեցան իմ խրճիթը. կ'աղաղակէին, կ'եր-
գէին, կը թռչկոտէին: Երբ նուագածուններ
իրենց փափաշներով եկան, աւելի կենդա-
նացաւ հանգիստականներու ուրախութիւնը:
Պարերն սկսան: Սալիհան զո՞հ էր եւ ու-
րախ, ինչպէս մի երախայ. նա բոլորովին
նուիրուած էր ինձ եւ անսահման կերպով
կը սիրէր զիս: Գո՞հ էի եւ ես էր իմ զոհո՞ւ,
զու՞թեամբս փրկիչ եղայ այդ արարածին:

Ինձ տուին այն խրճիթն որպէս մշտա-
կան սեփականութիւն՝ ուր կատարուեցաւ
իմ ամուսնութեան խորհուրդն եւ ես այն
տեղ բնակեցայ իմ անգին կենակցիս հետ:
Որպիսի՞ բերկրալի օրեր անցուցի անդ: Սա-
լիհան ա՛յնքան բարի էր, ա՛յնքան սիրելի եւ
ա՛յնքան հնազանդ. որ ես զիս կը համարէի
աշխարհիս ամենէն բախտաւոր մարդերէն:
Մին եւ բոլորովին մոռցած էի իմ կացու-
թիւնն:

Երբեմն իմ առանձնակի խորհրդածու-
թիւններուս միջոցին կը մտածէի գործած
յանցանքիս մեծութեան, այն զեղծման
վրայ զոր ես կատարած էի ամուսնանալով
այլակրօնի մը հետ: Ի՞նչ երեսով պիտի ներ-
կայանայի հօրեղբօրս, ի՞նչ պիտի ըսէի նմա
Այսպէս երբեմն կը տանջուէի ես եւ յու-
սահատութեան մէջ պատրաստ էի դիմել
ամէն ծայրայեղութեանց: Բայց երբ Սալի-
հան կը նայէր իմ վրայ, իսկոյն կ'անհետա-
նային բոլոր մթին մտածութիւնքս:

Այսպէս անցան երեք տարիներ. երկու
շաւակ ունեցայ, մի մանչ եւ մի աղջկա:
Զաւակացս ծնունդէն յետոյ Սալիհան ինձ
կ'երեւէր աւելի պաշտելի քան առաջ: Անոր
սիրովը կ'ապրէի: Իմ կեանքս կ'անցնէր
Զուանչիւրցիներու պարզ կենցաղավարու-
թեան հետ:

Իմ երջանկութիւնը կատարեալ ընելու
համար ինձ կը պակսէր մի բան, բրիտան-
եայ տեսնել Սալիհան: Այդ ու կ'ուզէի հա-
ղաթողեցնել իմ խղճն: Այդ նպատակաւ
կ'աշխատէի ծանօթացնել իմ կնոջ մեր կրօն-
քի սրբութիւնն եւ ճշմարտութիւնը: Սալի-
հան մեծ հաճութեամբ կը լսէր ինչ որ կը
պատմէի նմա: Նա չուտ ստացաւ բաւական
տեղեկութիւններ մեր կրօնքի վրայ, Տես-
նելով որ նա արդէն բաւական տեղեկա-
ցած է մեր կրօնից, յայտնեցի նմա քրիս-
տոնեայ եւ Վարանդայի մեկընդ եղբորորդի
լինելս: Պատմեցի ամէն ինչ եւ նա զղա-
այն միջոցին թէ ինչ մեծ զոհուութիւն
ըրած էի իրեն համար: Ոգեւորուած Սալի-
հան ինձ յայտարարեց թէ՝ պատրաստ է
քրիստոնեայ լինել եւ ինձ հետ գալ ուր որ
լինի:

Ես ուրախացած կը մտածէի թէ արդ-
եօք ինչպէս պէտք էր ի կատար ածել իմ
ցանկութիւններն, այսինքն մկրտել տալ Սա-
լիհան եւ հօրեղբօրս հաճութիւնն ստանալ
մեր ամուսնութեան համար:

Հօրեղբօրս ինձ նշանակած ժամանակա-
միջոցն արդէն անցած էր եւ ես կրնայի
վերադառնալ նորա մօտ առանց ո՞ր եւ
դժուարութեան հանդիպելու: Դիտաւորու-
թիւնս յայտնեցի Սալիհային. նա հաւանե-
ցաւ թէպէտ, բայց սարսափած կը մնար
առժամանակեայ կերպով պիտի բաժնեկ-
այն չէ:

ինչպէս Ջանաջի հանգստացնել նորա սիրտն. յանձնեցի յետոյ Սալիհան եւ իմ զաւակներս զորանչիս խնամոցն, եւ պատրուակելով թէ մեծ ժառանգութիւն մը կը հարկադրէր զիս խորասան վերադառնալ, մեկնեցայ Ջուանչիքցիներուն քովէն: Ճշմարտութիւնը միայն Սալիհան գիտէր:

Շատ ուրախացաւ հօրեղբայրս վերստին զիս տեսնելով: Այլ վայելէի նորա հայրական սէրն ու գորովն, որ ըստ օրէ կ'սպասէի մի յարմար առթի սիրտս նմա բանալու: Բայց այդ միջոցին պատերազմ ունեցանք խառնայի մելիքներուն հետ. այդ պատերազմն երկու ամիս տեւելի տեւեց եւ յետոյ՝ հաշտութեան դաշն կապեցինք:

Հօրեղբայրս վերադարձաւ Չանսիսի, ուրախութեամբ գրկեց զիս. կը գովէր իմ հմտութիւններս, իմ ճարտարութիւնը պատերազմական արհեստի մէջ: Այդ պատրաստութիւն յայտնել նմա իմ բաղձանքս երբ խօսքս կտրելով ըսաւ՝ թէ տղայութեան հասակէս ինքն ուխտ ըրած է թաղիչի մելիքի աղջկան հետ զիս ամուսնացնելու, երբ ես քսան եւ վեց տարեկան եւ հարսնոջն տասն եւ վեց տարեկան լինինք: Աւելցուց թէ ժամանակն հասած է եւ թէ թաղիչի մելիքը լսելով վերադարձաւ զրկած է իւր որդին զմեզ Ձէյվա հրաւիրելու ամուսնութեան պատկը կատարելու համար:

Լսելով այս խօսքերը, չուարած մնացի, կորան բոլոր յոյսերս: Հօրեղբայրս կը խօսէր այդ խնամութեան միայ մեծ փափագով: Այդու նա յոյս ունէր ամրացնել հաստատուն հիմքու վրայ մի սերտ բարեկամական կապ խառնայի բոլոր մելիքներու մէջ: Կարող չէի յայտնել նմա ինչ որ ինձ պատահած էր, վասն զի գիտէի որ նա պատրաստ էր զոհել իմ Սալիհան իւր քաղաքական նպատակներուն, եւ սակայն չէի կրնար ընդունիլ իւր առաջարկը: Այս պատճառներով որոշեցի մերժել նորա ցանկութիւններն եւ չյայտնել նմա իմ գաղտնիքը: Դո՛ւ գտաւ, աստղագէտ, միթէ արդար չէ՞ր իմ վարմունքս:

Այս պատմութեան ժամանակ աստղագէտը զարմացած եւ հիացած կը կենար:

—Շատ իրաւունք ունիք, յարգելի մելիք, պատասխանեց նա. մօրուքիս վրայ կ'երգնում, հազար անգամ իրաւունք ունիք, եւ պէտք էր լռէիք ի նկատ առնելով ձեր հօրեղբոր դիւրաբար բնաւորութիւնը:

—Առաւելագէտս զիս կը անհանգստացնէ այն պարագայն, պատասխանեց մելիքն, որ մինչեւ այժմ չկրցի տեղեկութիւն ստանալ կնոջն եւ զաւակներուս մասին եւ ոչ իսկ կարող եղայ անոնց տեղեկութիւն հաղորդել իմ մասին: Խոստացած էի նոցա բաժնուելու ժամանակս որ կը վերադառնամ քսան օրէն:

—Եթէ Ալին եւ սուրբ մարգարէն կը շնորհեն ինձ ազատիլ այս վիրապէն, ապահով եղիք, մելիք, որ դուք կրնաք ինձ վրասակել տեղեկութիւններ հաղորդելու ձեր կնոջն եւ զաւակներուն: Կ'աշխատիմ ապացուցանել ձեր առջեւ իմ հաւատարմութիւնն որպէս զի դուք ալ մտածէք թէ աստղագէտ Հասանն ալ կրնայ բանի մը օգտակար ըլլալ օր մը: Ես զձեզ այնքան սիրեցի, մելիք, որ պատրաստ եմ ձեր սիրոյն երկու հարիւր հաքուած կրել ոտներուս ներքեւ, միայն թէ զձեզ հանգիստ եւ երջանիկ տեսնեմ:

—Շնորհակալ եմ, Հասան, պատասխանեց երիտասարդն, ես կը վարձատրեմ քու հաւատարմութիւնն երբ որ կարենամ, եւ այն չափով որ դու միշտ յիշես: Եթէ գիտ-

նայի որ կինս ու զաւակներս հանգիստ ու առողջ են, այն ժամանակ համբերութեամբ կը տանէի այս բանտի չարչարանաց:

Այսպէս խօսելով նորա շնորհակցին որ ամուսնային կարճատեւ գիշերն արդէն անցած էր եւ արշալոյսի առաջին ճառագայթներն հրեղէն ժապուէնի նման ծագելով, կ'աւետէին նոր եւ պայծառ առաւօտ: Բայց լոյսի շառաւիղները չէին կրնար թափանցել անոնց ստորերկրեայ վիրապի մէջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔՐԱՆՍԱ

Երեսփոխանական ժողովոյ մէջ, յաւելուածական վարկերու վիճաբանութեան առթիւ Պ. Կոպլէի նախարարութիւնն ստացած է 80 ձայնի մեծամասնութիւն մը, սակայն այդ յաղթանակ կարելի է առ ժամանակեայ համարիլ: Ֆրանսայի երեսփոխանը թէպէտ դժգոհ Պ. Կոպլէի նախարարութենէն, բայց եւ այնպէս չեն սեղան՝ նախարարական տաքնալ յարուցանել Չատկական տօներու միջոցին: Մայիսին, երբ վերստին գումարի երեսփոխանական ժողովը, գրեթէ ապահովեալ է Պ. Կոպլէի նախարարութեան տապալումը:

Ֆրանսայի արտաքին քաղաքականութեան շահերը գլխաւորապէս կը պահանջեն որ պատկառելի նախարարութիւն մը կառավարէ քաղաքական խառնուրդը: Սեփական թերթերն իսկ վրդովեալ են արտաքին քաղաքականութեան մոտին: Եւրոպական Ապրիլի 1 ին լրացաւ երեք կայսերաց դաշնադրութեան պայմանագրին եւ դաշնադրութիւնը չվերանորոգուեցաւ: Ռուսիա կ'ուզէ բոլորովին ազատ մնալ ազագային համար: Գերմանիա, Աւստրիա եւ Իտալիա նոր դաշնակցութեամբ կը կապուին միմեանց հետ, իսկ Ֆրանսա, անհամաձայն Անգլիոյ հետ, իրեն հակառակորդ ունենալով նոր երրեակ դաշնակցութիւնն, թէպէտ բարեկամ Ռուսիոյ՝ սակայն առանց դրական ապահովութեան, կը մնայ բոլորովին կըզգիացեալ:

Նախարարական յարաւեւ փոփոխութիւնը եւ վստահելի նախարարութեան մը բացակայութիւնն ենթարկեցին քաղաքական միջոցները: Եւրոպական ո՛չ մի տէրութիւն կը վստահի այնպիսի նախարարաց՝ որպիսիք են Կոպլէ եւ Ֆլուրէնս, ոյք բոլորովին նորեկ են դիւանագիտական ասպարիզին մէջ, ոյք ո՛չ անցեալ ունին եւ ո՛չ ապագայ:

ԻՏԱԼԻԱ

Գեռ նոր վերջնական կերպով կազմակերպեցաւ խաղաղական նախարարութիւնն: Իտալիոյ մէջ նախարարական փոփոխութիւն մը արտաքին քաղաքականութեան խնդիր մ'է. թագաւորն իւր նախարարներն ընտրելու միջոցին աւելի Պերլինի հետ կը բանակցի քան երեսփոխանական ժողովոյ պետերուն հետ, եւ երեսփոխանը համամիտ են իրենց թագաւորին:

Տասը տարի է Իտալիա կը փայլէ մնալուն նախարարութիւն մը: Վասն զի որչափ ալ փոփոխութիւնը եղան բայց եւ այնպէս նախարարութեան պէտքը, Պ. Տէրբէթի մնաց անփոփոխ, եւ աւանդապահ է Իտալիոյ քաղաքականութեան: Տը Ռօպիլան կոմսը չմոններ նոր նախարարութեան

մէջ, թէպէտեւ Պերլինէ եւ Վիեննայէ ջերմասկէս կը փափագէին որ կոմսը չարունակէր վարել արտաքին գործոց նախարարի պաշտօնը: Բայց Պ. Քրիսթի որ ձախակողմեան ամենաազդեցիկ պետերէն մին է եւ կոչուած է ներքին գործոց նախարար լինիլ նոր սլաշտօնէութեան մէջ, կը խոստանայ միշտ պաշտպանել Իտալիոյ դաշնակցութիւնն Գերմանիոյ եւ Աւստրիոյ հետ, եւ կը յուսայ թէ ինք կարող պիտի լինի կորզել Պիզմարը իշխանէն աւելի նպաստաւոր պայմաններ Իտալիոյ համար: Այդ դաշնակցութեան պայմանագիրն, կ'ըսէ Տէրբէթի, պէտք է ընդունիլ ինչպէս որ է, առանց ո՛ր եւ է փոփոխման:

Արդէն դաշնագիրը շատ գաղտնի պահուած է, մինչեւ իսկ Պ. Քէօյտըլ Գերմանիոյ դեսպանն ի Հռոմ, չտեղեկացաւ այդ դաշնագրի պայմանաց: Պերլինէն կ'ըսէ ծրար մը եկաւ իրեն Պ. Տէրբէթիս յանձնելու համար: Գեապանը կատարեց այդ յանձնարարութիւնն եւ հրաժարեցաւ:

Կարելի է ըսել թէ Իտալիա չէ կարող բնաւ Գերմանիայէ բաժնուիլ, ո՛չ միայն այն պատճառաւ որ Ումպէրթոյ թագաւորն ու Գերմանիոյ զահաժառանգը սերտ մոտերիմ բարեկամներ են, այլ նաեւ առահի Ֆրանսայի Իտալիա թէպէտեւ իւր ազգային գոյութիւնը մեծ մասամբ պարտական է Ֆրանսայի, սակայն կարող չէ իւր դրական շահերն եւ մինչեւ իսկ այդ ազգային գոյութիւնը զոհել երախտագիտական ըզգացմանց:

Ումպէրթոյ թագաւորը չէ կարող ո՛չ համակրել եւ ոչ դաշնակցիլ հասարակապետական Ֆրանսայի, վասն զի չնորհիւ այդ համակրանաց եւ այդ դաշնակցութեան, հասարակապետական գաղափարները պիտի կարենան ազատօրէն մուտ գտնել Իտալիա — արդէն հասարակապետութեան հակամէտ — եւ վտանգել Ումպէրթոյի գահն, վրտանգ մը որ ամենամեծ գծադրութիւն պիտի լինի Իտալիոյ:

Ումպէրթոյ թագաւորը չէ կարող նաեւ դաշնակցիլ միապետական Ֆրանսայի մը, վասն զի այդ Ֆրանսան կրօնական եւ պահպանողական կուսակցութեան Ֆրանսան է եւ որոյ ջերմ փափագն է վերադարձնել Հռոմն առ Պապն:

Թէ այս եւ թէ ուրիշ կարգի նկատումներով, որոց մէջ են Ափրիկեան խնդիրներն, Իտալիա միշտ հեռու կը մնայ Ֆրանսայէն եւ բնականաբար կը մերժենայ Գերմանիոյ: Ինչպէս եւ ալ լինի, գերմանաւոր ոգին միշտ պիտի տիրէ ի նմա:

ՌՈՒՍԻԱ

Հնդկոստանէն հասած հեռագիրը հաղորդած էին թէ՛ Աֆղանստանի Էմիրը մըտադիր է հրատարակել սուրբ պատերազմ ընդդէմ Ռուսիոյ: Սակայն սուսական թերթերը կը հերքեն այդ լուրն հաստատելով թէ Էմիրը չունի ո՛ր եւ է պատրուակ թըշնամական գիրք մը բռնելու ընդդէմ Ռուսիոյ: Ասկէ զատ ի Բեդերսուրիկ պիտի սկսին բանակցութիւնը աֆղանստան սահմանադրւոյց գծման համար, որով պատերազմի տեղի չ'մնար:

Պերլինի դրամատետարց մի քանի խումբեր հետամուտ են միշտ կտրելու սուսական արժէթղթոց գիշերը: Ռուսական մամուլն այս պարագայէն սաստիկ զայրացած կը պահանջէ որ Ռուսիոյ կառավարութիւնն իւր դրամական պէտքերու համար այլ եւս չ'խոնարհի դիմել Պերլին, այլ ուղղակի յարաբերութեան մոտէ Ֆրանսայի դրամատետարց հետ:

Օ Ր Ա Գ Ի Ր

Կը յիշուի թէ Աղբ. վարչութեան որոշմամբ Տրապիզոնի Առաջնորդ Գեր. Գարեգին Եպիսկոպոսի պաշտօն տըրուած էր Մուշ երթալ և կարգադրել տեղական ինչ ինչ աղբային գործեր: Գարեգին Եպիսկոպոսի սոյն պաշտօնը վաւերացնող կայս. հրամանագիրը Բ. Դրան կողմէ Պատրիարքարանի յանձնուած լինելով, Ն. Գերապատուութեան զրկուեցաւ:

Դատական եւ կրօնական գործոց վսեմ. նախարարը պաշտօնագիր մ'ուղղելով Ամեն. Ս. Պատրիարք Հօր՝ յանձնարարած է հրամայել Գարեգին Թաղական Խորհրդոյն որպէս զի տեղւոյն ծննդեան, ամուսնութեան, վախճանման եւ տեղափոխութեան դէպքերը կանոնաւորապէս հաղորդէ Գարեգին մարդահամարի պաշտօնէին:

ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻՒՆ

Կայսերական Իրատէն որ Շիրքէթի-Խայրիէի արտօնութեան պայմանագրով վերանորոգումը կը հրամայէ՝ Բ. Դուռը զրկուեցաւ: Ըստ Իրատէին, յիշեալ ընկերութեան արտօնութեան պայմանագրով երկարաձգուած է 30 տարի եւ միանգամայն անոր յանձնուած է Մարմարայի բոլոր նաւամատոյցները, Նիկիոմիդիոյ ժովախորշն ալ միատեղ, շոգենաւ բանեցնելու արտօնութիւնն: Ի փոխարէն, Շիրքէթը պարտաւոր պիտի լինի Ադրիականի օսմանեան նաւահանգիստները շոգենաւ բանեցնել, ցորչափ տեւէ իւր մենաշնորհ:

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԴՈՐԾԵՐ

Տակաւին դժուար է գուշակել թէ, կըսէ Մանգեթ, ինչ ելք պիտի ունենան Բ. Դրան և Ռուսիոյ միջեւ կատարուած բանակցութիւնը ի մասին պուլկարական խնդրոյն. սակայն ինչ ինչ նշաններէ կերելի թէ այդ բանակցութիւնը պիտի կրնան գոհացուցիչ երեւոյթ մ'առնուլ և խնդրոյն խաղաղասիրական լուծման նպատակը:

Վերջին զեկուցման մէջ զոր Պ. Նէլսոնի ըրաւ առ Բալթ. Մեծ-Եպարքոսն, ըստուած է թէ Ռուսիա կը պնդէ իւր առջի առարկութեանց վրայ, այսինքն՝ չուզեր ո՛ր և է յարաբերութիւն հաստատուել Պուլկարիոյ արդի կառավարչաց հետ: Երբ խնամակալութիւնը քաջալի տեղի տալու համար օրինաւոր կառավարութեան մը, յայնժամ միայն Բեդրոպուրկի կառավարութիւնը պիտի միանայ Պէրլինի Դաշնագիրն ըստորագրող միւս տէրութեանց հետ, իշխանի ընտրութեան և այլ խնդիրներ կարգիւրու համար: Ռուսիա այն կարծիքէն է եղեր որ, եթէ գերիշխան պետութիւնն ալ համանման դիրք մը բռնէ խնամակալաց հանդէպ, պուլկարական տաղնապի լուծումը մեծապէս պիտի դիւրանայ:

ՄԱՆԿԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ

Կայս. բժշկական ընկերութեան վերջին նիստերէ միոյն մէջ Տր. Վուշինսոյ խօսք առնելով հետեւեալ յայտարարութիւնն ըրեր է.

« Բարեբաղդ եմ ծանուցանելով ձեզ թէ ի մօտոյ մանկաբարձութեան գործնական վարժարան մը (+նէ+) պիտի հաստատուի ի Կ. Պոլիս: Յաւալի թերի մ'էր այս գործը Վեհ. Սուլթանի հոգածութիւնը կը լնու: Սին Օգոստավառ Վեհապետն որ անսպառելի առատաձեռնութեամբ օժտած է երկիրն ամեն կերպ գիտական և արուեստագիտական հաստատութիւններով, չէր կրնար անտես առնուլ այս վերջինն՝ ուր պիտի ուսանին մանկաբարձ կանայք և որ անհունապէս օգտակար հաստատութիւն մը պիտի լինի: Կայսերական Իրատէն ելած է արդէն, ծրագիրը գծուած են, ծախուց գումարը պատրաստ է և մօտ ժամանակէն շէնքը պիտի կառուցուի՝ նոր ապացոյց մը տալու համար մեր Օգոստ. Վեհապետին »

լուսամիտ հոգածութեան: Աւելորդ յիշեցունել ձեզ այն թերի ուսումն գործած են մեր մանկաբարձ կանայք եւ այդ դասուն կազմութեան եղանակն՝ որ դժբաղդաբար հնոյն Հռոմ հիմնարկութիւնը կը յիշեցունէ: Նոյն հաստատութիւնը սահմանաւ է լիով լրացնելու այս թերին: Սյս առթիւ պարտք կը համարիմ յայտնել թէ Վսեմ Էտհէմ փաշա՝ իբր նախագահ առաջապահական ժողովոյ՝ յոյժ գործօն աշակցութիւն մը նուիրեց այս քաղաքը կրթիչ խորհրդոյն իրագործման: »

Վառնայէն կը գրեն թէ պուլկարական վարչութիւնն իւր բոլոր նաւահանգիստներուն մէջ հնգօրեայ քարանդակ նա հաստատուել է Աւստրիա-Հունգարիայէն և Դանուբէն եկող շոգենաւահամար: Էքսպրէս-Օրիանի ուղեւոր Ռուսճուրի մէջ կ'ապասեն այս քարանդակն:

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՆԵԼԷ ԻՐԱԳՐՈՒ



ՄԱՆԿԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ

ԵՇ ԵՐԵՎԱՆԻՈՒԹ ՄԱՆԿԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճիշտակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ: Ար նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը: Գլխու թերի-շուտ մը անքեղութիւնէ: Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի:

« Մէկ շիջ կը բաւէ: » Այդ փորձը ունեցան ամենքը որոնցմէ իրազ ունած մազերը իրենց բնական գոյնին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան:

Կերկ չէ, և ամենեին գեան մը չընեն: Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիջ մը ստացիր ԳԼՔԻՆ Ս. Ա. ԱԼԷՆԻ Զամառ Խարհակաւ յայն նորոգողն: (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիոս Եօրք: Կըլաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգղիացի գեղագործներու քով:



ՀԱՐԱՆԵԿԱՆ ԾԱՂԱԿՆՔՈՒՆՑ

ԳԵՂԵՑԿԵՑՈՒՆՈՂ ՄԱՐԿԱՆՑ ԳՈՅՆԵՐ, ՍԻՇՏ ԾԱՂԱԿՆՔՈՒԹ, ՍԻՇՏ ԹԱՐԿ:

Ընդամուտն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիութեան և բողմաթիւ փոշիներէ: Առաջին անգամ գործածելովն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի խկոյն որ երեսը, վիզը, թեկերը և ձեռքները պիտի առնուն անոյշ փափկութիւն մը և մարմարիոնի փայլ հանդերձ շուշանի և վարդի գունով և բուրմամբ: Ապոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցունեն: Ընհա կ'ընեն մօրթի սեւութը, երեսի և ձեռքի ցանկերը, արևայրուքը, և ուրիշ ամեն բրտութիւն և բծաւորութիւն: Եւ այս ամեն բանով անկարելի կ'ընեն մասնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիոս Եօրք: Կըլաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգղիացի գեղագործներու քով:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիոս Եօրք: Կըլաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգղիացի գեղագործներու քով:



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱՋՆԵՐՈՒ
ՄԱՋՆԵՐՈՒ
ՄԱՋՆԵՐՈՒ ՄԱՋ ՀԱՏԻՆ ՆՈՐՈՂԻՉ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունեն ձերմըկած կամ գունաթափ մազերը. կը դադրեցունեն անոնց թափելը. կը մաքրէ գլուխը, կը վերջացունեն թերի, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ: Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիոս Եօրք:

Ար գտնուի. Ն և Ժ. Գանգիւր եղբայրք բրիտանական գեղարարը, բերա, Մեծ փողոց. Էսթրետ Բարուանա, Անգլիական մթերանոց, Երեւէր Գալտըրմ. և Ի զիտոր Լազանտէլա 455, բերա Մեծ փողոց: